




**Հոդվածի հղումը.** Սաֆարյան Ն., Հովհաննիսյան Ա. (2023), Կանաչ բանկերի կայացման հիմնախնդիրները ՀՀ-ում, Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 2(2), 42-56, DOI: 10.52174/29538114\_2023.2-42  
**Ներկայացվել է խմբագրություն՝** 15.08.2023 թ.  
**Ուղարկվել է գրախոսության՝** 04.09.2023 թ.  
**Երաշխավորվել է հրատարակման՝** 10.11.2023 թ.


## ՆՈՐԱՅԻ ՍԱՖԱՐՅԱՆ

ՀՊՏՀ բանկային գործի ամբիոնի դոցենտ,  
տնտեսագիտության թեկնածու

 <https://orcid.org/0000-0003-2231-0037>

## ԱՐԵՎԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի դոցենտ,  
տնտեսագիտության թեկնածու

 <https://orcid.org/0000-0001-9592-3163>

## ԿԱՆԱՉ ԲԱՆԿԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ<sup>1</sup>

Հետազոտության են ենթարկվել Կանաչ բանկերի կայացման հնարավորությունները ՀՀ-ում: Մասնավորապես՝ վերլուծության են ենթարկվել ՀՀ առևտրային բանկերի շրջակա միջավայրի և սոցիալական ոլորտի կառավարման համակարգը (ՇՄԱՄԴԿՀ), դրա առանցքային բաղադրիչները, գործիքակազմը, կապարելագործման հնարավորությունները: Միաժամանակ, դիտարկվել են ՀՀ կենտրոնական բանկի՝ որպես մեգակարգավորողի և բանկային վերահսկողության բացառիկ իրավասություն ունեցող ինստիտուտի ուղղորդիչ գործողությունները և քայլերը, որոնք պետք է նպաստակառուցված լինեն ՀՀ առևտրային բանկերի կողմից կանաչ ֆինանսավորման մոտիվացմանը:

Հետազոտության արդյունքում ներկայացվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից կանաչ ֆինանսական ակտիվների ձևավորման որոշակի առաջարկություններ և պահանջներ՝ վարկառուի վարկունակության գնահատման, առաջարկվող բիզնես ծրագրի, գործունեության ոլորտի ՇՄԱՄԴԿՀ գնահատման, վարկային պայմանագրի, «Բացառման ցանկի» (Negative list), վարկառուի գործունեության վայր այցելությունների իրա-

<sup>1</sup> Հոդվածում տեղ գտած առաջարկությունների գերակշիռ մասը հավասարապես կիրառելի է ֆինանսաբանկային մյուս կազմակերպությունների համար ևս:

կանացման, մշտադիտարկման հաշվետվության կազմման, բողոքարկման գործընթացների կազմակերպման և այլ բնագավառներում:

«Կենտրոնական բանկի մատուլ առաջարկություններ են ներկայացվել նոր՝ եռամսյակային պարբերականությամբ հաշվետվական ձևի մշակման, առևտրային բանկերի CAMELS վարկանշավորման համակարգում ՇՄՆՍՌԿՀ գնահատականի և կանխարեւոմների ներառման, վարկային ռիսկի, շուկայական ռիսկի և գործառնական ռիսկի հանրագումարում (ՌԿԱ) կանաչ ակտիվների հնարավոր ցածր դասի ռիսկով կշռման, առևտրային բանկերի սթրես թեստերում ՇՄՆՍՌԿՀ ռիսկի հաշվարկի ներառման, կանաչ պարտավորումների թողարկման արդյունքում ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման հիմնական տնտեսական նորմատիվից ազատման, տրամադրված կանաչ ակտիվների նկատմամբ ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստավորման կարգում արտոնյալ տրոկսադրույքների կիրառման և այլ ուղղություններով:

**Հիմնաբառեր.** պատասխանատու ֆինանսավորում, կանաչ բանկ, կանաչ ակտիվներ, «Կենտրոնական բանկի և առևտրային բանկերի կանաչ ֆինանսավորման գործիքակազմ

JEL: G21, E58

DOI: 10.52174/29538114\_2023.2-42

**Ներածություն:** Վերջին տարիներին տեղի ունեցող աշխարհաքաղաքական խոշորաձավալ իրադարձություններն ամբողջ աշխարհում իրենց լուրջ մարտահրավերները պարտադրեցին առևտրային բանկերին և բանկային բիզնեսին ընդհանրապես: Հայաստանի պարագայում, COVID-19 համավարակի հետ մեկտեղ, բանկային գործունեության առումով առանցքային ազդեցություն ունեցան արցախյան պատերազմի հետևանքները: Արդյունքում՝ ՀՀ առևտրային բանկերը կանգնեցին նոր հիմնախնդիրների հրատապ լուծման պահանջի առջև: Այդուհանդերձ, 2020 թվականն իրավամբ կարելի է համարել ՀՀ-ում նեոբանկինգի սկզբնավորման տարի: Մասնավորապես՝ համավարակը յուրօրինակ բարոմետր հանդիսացավ ՀՀ բանկային համակարգի թվայնացման (digital banking) մակարդակի, իսկ կայուն զարգացման հրատապությունը՝ բնապահպանական և շրջակա միջավայրի ռիսկերի (green banking) կառավարման գնահատման համար: Ինդիքն այն է, որ ՀՀ առևտրային բանկերն ավելի հաճախակի գործառնություններ սկսեցին իրականացնել թվային (digital) և նորարարական հարթակի օգնությամբ: Ըստ էության, հաճախորդները, առանց բանկ այցելելու, արագ, հեշտ և հարմար եղանակով ֆինանսական գործարքներ իրականացնելու հնարավորություն ստացան: Թվային փոխակերպումների հետ մեկտեղ, նեոբանկինգի առանցքային բաղադրիչ դարձավ կանաչ բանկերի ձևավորումը, որը, վերջին հաշվով, պատասխանատու ֆինանսավորման (responsible financing) տրամաբանական շարունակությունը հանդիսացավ: Պատահական չէ, որ կայուն զարգացումն անմիջականորեն կապվում է սոցիալական և շրջակա միջավայրի ռիսկերի արդյունավետ կառավարման հետ: Հետևաբար՝ ՀՀ առևտրային բանկերը թևակոխում են զարգացման որակական նոր փուլ՝ բանկային գործունեության դասական մոտեցումները բնապահպանական ռիսկերի կառավարման ժամանակակից չափորոշիչներին համարժեք փոխակերպելու առումով: Անկասկած, այս բնագավառում կարևոր դերակատարություն ունի նաև ՀՀ կենտրոնական բանկը՝ որպես

առևտրային բանկերի գործունեության մեզակարգավորող: Ընդ որում, ՀՀ կենտրոնական բանկի դերակատարությունը երկակի է. նախ՝ Կենտրոնական բանկի կարգերով ու կանոնակարգերով հարկ է մոտիվացնել կանաչ առևտրային բանկերի ձևավորումը, մյուս կողմից՝ վերահսկել այդ գործընթացը:

**Գրականության ակնարկ:** Կանաչ բանկերին նվիրված ուսումնասիրությունները կարելի է համարել նեոբանկինգի ամենահրատապ թեմաներից մեկը: Առարկայական առումով դա առնչվում է առևտրային բանկի ՇՄԱՍՌԿՀ-ի հետ: Այս թեմային անդրադարձել և որոշակի ուղեցույցներ են մշակել Համաշխարհային բանկը (WB), Ասիական զարգացման բանկը (ADB), Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC), Բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեն (BIS), Եվրոպական կենտրոնական բանկը (ECB), ՄԱԿ-ը, Կանաչ կլիմայի ֆոնդը (Green Climat Fund), Ֆինանսական համակարգի «կանաչացման» ցանցը (NGFS – Network for Greening the financial system. 2023 թ. մարտի 29-ի դրությամբ ունի 125 անդամ և 19 դիտորդ)<sup>2</sup> և այլն:

ՇՄԱՍՌԿՀ առանձին հիմնախնդիրներին անդրադարձել են նաև գիտնական հետազոտողները՝ նշելով դրա կարևորությունը բանկային գործունեության կարգավորման բնագավառում<sup>3</sup>:

Հայաստանի պարագայում պատասխանատու ֆինանսավորման և կանաչ բանկերի հիմնախնդիրներին անդրադարձել են ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կենտրոնական բանկը<sup>4</sup>, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը<sup>5</sup>, «Ի-Վի Քոնսալթինգ» վերլուծական կենտրոնը<sup>6</sup>: «Արմսվիսբանկ» ՓԲԸ նախաձեռնությամբ ՀՀ առևտրային բանկերի աշխատակիցների մասնակցությամբ անց են կացվել միջազգային սեմինարներ և կոնֆերանսներ: Մեծաթիվ ուսումնասիրություններ և վերլուծություններ են կատարվել միջազգային ֆինանսաբանկային համակարգի մասշտաբով խոշորագույն բանկերի կողմից, որոնք մշակել են իրենց ներքին կարգերն ու կանոնակարգերը ՇՄԱՍՌԿՀ բնագավառում: Հայկական առևտրային բանկերից շատերը նույնպես ունեն իրենց ներքին կարգերն ու կանոնակարգերը, որոնցով գործնականում առաջնորդվում են վարկառուների, նրանց բիզնես ծրագրերի, ինչպես նաև գործունեության ոլորտների բնապահպանական և սոցիալական ռիսկերը գնահատելու համար: Նշենք, որ Հայաստանի բանկերի պարագայում այդ կարգերը բանկային գաղտնիք են համարվում և չեն հրապարակվում: ՇՄԱՍՌԿՀ-ի մասին որոշակի հիշատակումներ և բացահայտումներ կան առանձին առևտրային բանկերի պաշտոնական կայքերի՝ «Մեր մասին» կամ «Բանկային գործունեության տարեկան հաշվետվություններ» բաժիններում,

<sup>2</sup> Տե՛ս <https://www.ngfs.net/en/about-us/membership>

<sup>3</sup> Տե՛ս **Miralles-Quirós M. M., Miralles-Quirós J. L., Redondo Hernández J.** (2019). ESG performance and shareholder value creation in the banking industry: International differences. *Sustainability*, 11(5), 1404. **Arun T., Girardone C., Piserà S.** (2022). ESG issues in emerging markets and the role of banks. *Handbook of Banking and Finance in Emerging Markets*, 321. **Cerrone R.** (2022). Banking Regulation for ESG Principles and Climate Risk:

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի կայուն (հարատև) ֆինանսների ազգային ճանապարհային քարտեզ, ՀՀ կենտրոնական բանկ, հոկտեմբեր, 2023:

<sup>5</sup> Տե՛ս About «Scaling up green finance practices in Armenia» readiness program funded by «Green Climate Fund», 2021:

<sup>6</sup> Կանաչ ֆինանսավորման գործիքակազմի հարցում շահառուների շրջանում արդյունքների հակիրճ ներկայացում, Հայաստան, մարտի 2, 2021:

որոնց միջոցով, սակայն, դժվար է մանրամասն և լիարժեք պատկերացում կազմել բնապահպանության բնագավառում բանկի ռազմավարության և քաղաքականության մասին:

Այդուհանդերձ, ամփոփելով համացանցում առկա հրապարակումները և գրականությունը, կարելի է եզրակացնել, որ ՇՄԱՍՌԿՀ-ն յուրաքանչյուր առևտրային բանկի բիզնես մոդելին համապատասխան կանոնակարգերի ու կարգերի, դրանց գործնական կիրառության և ներքին հսկողության համակարգի ամբողջությունն է: Ըստ էության, առևտրային բանկի ՇՄԱՍՌԿՀ-ն ներքին հսկողության (Internal control), ռիսկերի կառավարման (Risk management), համապատասխանության (Compliance) համակարգի առանցքային բաղադրիչ է, որը ենթադրում է բանկի կառավարման համապատասխան մարմնի կողմից հաստատված և միմյանց հետ փոխշաղկապված ու փոխլրացնող ներքոհիշյալ մեթոդական ուղեցույցների (կարգերի, կանոնակարգերի) առկայություն՝

- Բնապահպանական և սոցիալական ռիսկերի տեսակները.
- Սոցիալ-բնապահպանական սկզբունքները.
- Խտրականության անթույլատրելիությունը և հաշմանդամությունը.
- Անվտանգության ծառայողների աշխատանքի հետ կապված ռիսկերի և ազդեցությունների կառավարումը և գնահատումը.
- Երրորդ կողմի կողմից իրականացվող մշտադիտարկումը.
- ՀԲ սոցիալ-բնապահպանական 10 չափորոշիչները<sup>7</sup>:

Ինչ խոսք, առևտրային բանկերը կարող են ունենալ և ունեն ՇՄԱՍՌԿՀ-ն կարգավորող այլ լրացուցիչ ներքին կանոնակարգեր և մեթոդական ուղեցույցներ նույնպես<sup>8</sup>:

**Հետազոտության մեթոդաբանություն:** Կանաչ բանկերի հիմնախնդիրների հետազոտության մեթոդաբանությունը, ՀՀ բանկային համակարգի օրինակով, որոշակի դժվարությունների հետ է կապվում, քանի որ վերլուծությունների և ուսումնասիրությունների դասական շատ մեթոդներ ուղղակի կիրառելի չեն՝ տվյալների ոչ թափանցիկ, ոչ հրապարակային լինելու պատճառաբանությամբ (համարվում են *բանկային գաղտնիք*): Այդուհանդերձ, հարկ է շեշտել, որ սույն հոդվածի նպատակը ոչ թե ՀՀ առևտրային բանկերի՝ ըստ պատասխանատու ֆինանսավորման կամ կանաչ ակտիվների համեմատությունն է և վարկանշավորումը, այլ, հրապարակված նյութերի միջոցով, կանաչ բանկերի կայացմանն ուղղված գործիքակազմի կատարելագործման նպատակով համալիր միջոցառումների (ճանապարհային քարտեզի) մշակումն ու առաջարկությունների փաստացի ձևավորումը: Այս նպատակին հասնելու համար դիտարկվել են ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական ակտիվների ձևավորման ժամանակ կիրառվող գործիքների կատարելագործման ու ՀՀ կենտրոնական բանկի՝ որպես մեգակարգավորողի տնօրինության տակ գտնվող գործիքակազմի զարգացման հնարավորությունները՝ հասնելու կանաչ ֆինան-

<sup>7</sup> Տե՛ս <https://projects.worldbank.org/en/projects-operations/environmental-and-social-framework/brief/environmental-and-social-standards>

<sup>8</sup> ՀՀ որոշ բանկեր իրենց ՇՄԱՍՌԿՀ քաղաքականության մեջ ներառել են ՀԲ, ԱԶԲ, ԵՆԲ, ՄՖԿ, ԵԿԲ, Բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի կողմից առաջարկվող բոլոր մեթոդական ուղեցույցները:

սավորման մոտիվացմանն ու պատասխանատվության մակարդակի բարձրացմանը: Նշված նպատակադրումն էլ կանխորոշել է հետագոտության մեթոդաբանությունը, որի առանձնահատկությունը հետևյալն է.

**Առևտրային բանկերի մասով:** Հետագոտվել է ՀՀ առևտրային բանկերի կողմից կանաչ ֆինանսավորման՝ կանաչ ակտիվների տրամադրման, կանաչ պարտատոմսերի թողարկման ժամանակ կիրառվող գործիքակազմը (քաղաքականություն, կարգեր, կանոնակարգեր, մեթոդական ուղեցույցներ):

**ՀՀ կենտրոնական բանկի մասով:** Հետագոտվել են ՀՀ առևտրային բանկերի գործունեության կանոնակարգման առավելագույն «կանաչացման» հնարավորությունները առևտրային բանկերի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների, ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստաֆոնդերի ձևավորման, բանկերի գործունեության ամփոփ գնահատման վարկանշավորման համակարգերի, ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների, բանկերի ներքին հսկողության նվազագույն պայմանների ապահովման բնագավառում:

**Վերլուծություն:** Պատմականորեն ՀՀ բանկային համակարգում ՇՄԱՍՈԿՀ ներդրումը կապվում է ՀՀ առևտրային բանկերի կողմից, սեփական ռեսուրսներից բացի, միջազգային ծրագրերով դոնոր կազմակերպությունների ներգրաված միջոցներով վարկավորման գործընթացի հետ: Դոնոր կազմակերպությունները (Համաշխարհային բանկ (WB), Վերականգնման վարկերի բանկ (KfW), Եվրոպական ներդրումային բանկ (EIB), Ասիական զարգացման բանկ (ADB) և այլն), մի շարք պահանջների հետ մեկտեղ, վարկային ռեսուրսների տեղաբաշխման ժամանակ վարկառուի բնապահպանական ռիսկի գնահատման պահանջ էին ներկայացնում: Բնապահպանական բարձր ռիսկ պարունակող բիզնես ծրագրերի իրականացման ժամանակ պահանջվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից տրված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գնահատական (ՇՄԱԳ): Այսպիսով՝ ՀՀ բանկային համակարգում սկսեցին ձևավորվել պատասխանատու ֆինանսավորման (responsible finance) հիմքերը: Միաժամանակ, բանկերում սկսեց մշակվել կայուն զարգացման տեսլականը, որը ենթադրում է բնապահպանական և սոցիալական կայունության մշակույթի արմատավորում:

Առարկայական առումով, Հայաստանում նախադեպ դարձան հայ բնապահպանների բողոքի ցույցերը Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկի (EBRD) երևանյան գրասենյակի դիմաց՝ պահանջելով չհամագործակցել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի հետ, քանի որ հենց այդ բանկն էր մտադիր 250.0 հազ ԱՄՆ դոլարի վարկ տրամադրել Թեղուտի հանքավայրը շահագործող «Արմենիան Քափրը Փրոգրամ» ՓԲԸ-ին<sup>9</sup>: Իսկ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն առաջինը Հայաստանում հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխեց կանաչ պարտատոմսեր<sup>10</sup>:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ վերջին տարիներին հրամայական պահանջ է դառնում կայուն ֆինանսական զարգացման աճող մարտահրավերներին դիմակայությունը: Գլոբալ առումով, կայուն ֆինանսական զարգացման տեսլականը ներառում է բնապահպանական և սոցիալական կայուն

<sup>9</sup> Տե՛ս <https://antarter.wordpress.com/2010/08/31>

<sup>10</sup> Տե՛ս <https://ir.ameriabank.am/hy/news/ir-releases/detail>

նություն: Հարկ է նշել նաև, որ կիրառանվտանգությունը կամ կիրառողականությունը («Ես եմ» ազգային նույնականացման համակարգը<sup>11</sup> նույնպես) ընդգծված սոցիալական դիսկրիմինացիան է պարունակում, իսկ Հայաստանում, ինչպես հայտնի է, արձանագրվեցին բազմաթիվ կիրառողականություններ առևտրային բանկերի վրա:

Ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու նպատակով կենտրոնական բանկերի կարևոր խնդիրն է դարձել նաև ֆինանսական կայունության ապահովումը՝ գների կայունության ապահովման հետ միասին: Ըստ էության, թվայնացման (digital) հետ մեկտեղ, կանաչ բանկերի/պատասխանատու ֆինանսավորման (responsible banking), ինչպես նաև ներառական բանկերի տարածումը դառնում է ներբանկինգի առանցքային բաղադրիչը: Գլոբալացման ներքո առևտրային բանկերի առջև հրամայական խնդիր են դարձել առկա մարտահրավերների գնահատումը և նոր ռիսկերի կանխատեսումը, որոնք ընդգծված կոռեկցիոն և շղթայական բնույթ ունեն և կարող են անկանխատեսելի հետևանքներ ունենալ: Օրինակ՝ ՇՄԱՍՌԿԿ խաթարումները կարող են շղթայական գործընթացներ առաջացնել վարկային, դեֆոլտի, խուճապի ռիսկերի տեսքով՝ ընդհուպ առևտրային բանկի անվճարունակություն և սնանկություն:

1991 թ. առաջին անգամ ֆինանսաբանկային բնագավառում Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ) Bank of America-ի հետ բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման պայմանագիր կնքեց, որով սկզբնավորվեց ՇՄԱՍՌԿԿ ձևավորման գործընթացն ամբողջ աշխարհում: Ներկայումս աշխարհում 132 բանկ միացել և ընդունել են պատասխանատու բանկային գործունեության (responsible banking) սկզբունքները<sup>12</sup>: Ի դեպ, բանկային գործունեության թվակերպումն իր մեջ կանաչ բանկերի բաղադրիչ է պարունակում, քանի որ էլեկտրոնային փոխակերպումների արդյունքում հսկայածավալ թղթի տնտեսում է տեղի ունենում: Իսկ COVID-19 համավարակի տարածումն ամբողջ աշխարհում յուրատեսակ բարոմետր էր թվային բանկինգի պատրաստվածության առումով, որը դասական ՇՄԱՍՌԿԿ փորձաքար էր նաև առևտրային բանկերի համար:

ՀՀ բանկային համակարգը կանաչ բանկերի կայացման փուլում է գտնվում, որը ենթադրում է հստակ և նպատակաուղղված ճանապարհային քարտեզի մշակում ինչպես ՀՀ կենտրոնական բանկի, այնպես էլ առևտրային բանկերի համար: Հետևաբար՝ մեր վերլուծության տրամաբանությունը պետք է լինի հետևյալը. դիտարկել ՀՀ կենտրոնական բանկի և առևտրային բանկերի կողմից իրականացվող միջոցառումների համալիրը:

**ՀՀ կենտրոնական բանկ:** Միանշանակ է այն փաստը, որ ՀՀ կենտրոնական բանկի ցանկացած պահանջ այս բնագավառում պետք է պարտադիր լինի բոլոր առևտրային բանկերի համար: ՀՀ կենտրոնական բանկը պետք է ուղղորդիչ առաքելություն ստանձնի ՀՀ-ում կանաչ բանկերի կայացման նպատակով: Այս տեսանկյունից, հրատապ է ՀՀ կենտրոնական բանկի կարգերի և կանոնակարգերի վերանայումը՝ «կանաչացման» տեսանկյունից:

<sup>11</sup> Տե՛ս <https://www.ekeng.am/hy/nid>

<sup>12</sup> Տե՛ս <https://www.environmental-finance.com/content/analysis/the-principles-for-responsible-banking-one-year-on.html>

Առանցքային առաջնահերթություն ունի ՀՀ օրենքների և ենթօրենսդրական ակտերի համապատասխանեցումը միջազգային օրենքներին և կոնվենցիաներին, քանի որ կանաչ բանկերի փիլիսոփայությունը կապվում է ոչ միայն վարկառուի, նրա բիզնես ծրագրի, գործունեության ոլորտի հետ, այլ նաև գնորդների և մատակարարների հետ: Այսպես օրինակ՝ անհրաժեշտ է բացառել այնպիսի մատակարարների և գնորդների հետ աշխատանքը, որոնք ներգրավված են արգելված գործունեության մեջ: Որպես մատակարար և գնորդ կարող են հանդես գալ ոչ ռեզիդենտներ՝ այլ երկրներում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտներ:

Հարկ է նշել, որ ՇՄԱՍՌ-երը ՀՀ-ում ամենից լավ կառավարվում են դոնոր կազմակերպությունների կողմից վարկավորումներով, քանի որ այս դեպքում պահպանվում են ՇՄԱՍՌ-Կ բոլոր բաղադրիչները, ընդհուպ մինչև բողոքարկումների գործընթացը: Ի դեպ, միջազգային դոնոր կազմակերպությունները ներկայումս առաջարկում են, որ ՀՀ առևտրային բանկերը ոչ միայն միջազգային ծրագրերով ներգրավված դրամական միջոցներով, այլ նաև սեփական ռեսուրսներով վարկավորման ժամանակ պահպանեն ՇՄԱՍՌ-Կ պահանջները: Տրամաբանական է, որ նման պահանջ ՀՀ առևտրային բանկերին կարող է ներկայացնել նաև ՀՀ կենտրոնական բանկը:

Խնդիրն այն է, որ բացի այն հանգամանքից, որ ՇՄԱՍՌ-Կ պահանջները պետք է իմպերատիվ և միասնական լինեն բոլոր բանկերի համար, անհրաժեշտ է բանկերին մոտիվացնել կանաչ պրոդուկտների և ծառայությունների մատուցման բնագավառում ևս: Ինքնին հասկանալի է, որ բիո- կամ էկոբանկերի կայացման գործընթացը կարող է ուղեկցվել ծախսերի ավելացմամբ, իսկ որոշ դեպքերում կարող է նվազել առևտրային բանկի շահութաբերությունը/եկամտաբերությունը: Այսինքն՝ հրատապ է դառնում բանկերի կողմից «կանաչացում-եկամտաբերություն» երկրնտրանքի լուծման օպտիմալ տարբերակների գործարկումը: Այս պարագայում ՀՀ առևտրային բանկերի համար հրատապ է դառնում նաև ապահովագրության իրականացումը ՇՄԱՍՌ-Կ հնարավոր պատահարներից:

ՀՀ կենտրոնական բանկն իր տնօրինության տակ գտնվող գործիքակազմով հնարավորինս պետք է մոտիվացնի առևտրային բանկերի կանաչացումը: Յուրաքանչյուր բանկ պետք է իր գործունեության բիզնես մոդելին համարժեք յուրօրինակ մատրիցա կառուցի՝ ՇՄԱՍՌ – կայացման հավանականություն – հնարավոր ազդեցություն – հետևանք (կապիտալի կորուստ/ ծախսերի ավելացում) բաղադրիչներով: Մատրիցայում որպես առանձին փոփոխական կարող է հանդես գալ նաև ՇՄԱՍՌ-Կ խախտումների հետևանքով պարտավորությունների կատարման ռիսկը (պարտադիր վճարման ենթակա տուգանքների կամ տույժերի արդյունքում բանկի ֆինանսական վիճակի վատթարացումը): Միանշանակ է, որ և՛ ՀՀ կենտրոնական բանկը, և՛ առևտրային բանկերը պետք է ունենան ՇՄԱՍՌ-երի դասակարգման մեթոդաբանություն՝ չափորոշիչներ, ցուցանիշներ, որոնց գնահատման արդյունքում ռիսկը կգնահատվի՝ *բարձր*, *միջին* կամ *ցածր*:

ՀՀ կենտրոնական բանկը, բանկային վերահսկողության կանաչացման առումով, պետք է կանոնակարգի ներքոհիշյալ բնագավառները:

Բանկի ռիսկ-մենեջմենթի գործառույթի առանցքային բաղադրիչ դարձնել ՇՄԱՍՌ-ի կառավարումը, որը կարող է կատարվել բանկի ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման գործառույթների իրականացման համար պատասխանատու աշխատակիցների կողմից:

Սթրես թեստերի վերաբերյալ թիվ 34 եռամսյակային հաշվետվության մեջ պետք է ներառել ՇՄԱՍՌ սթրես թեստավորումը նույնպես: Կլիմայի հետ կապված ֆինանսական ռիսկերը (climate-related financial risks) հարկ է ներառել սթրես թեստերում: Որպես նախատիպ կարող է դառնալ Եվրոպայի կենտրոնական բանկի կողմից մշակված սթրես թեստի օրինակը<sup>13</sup>:

Էական փոփոխությունների և բացասական զարգացումների վերաբերյալ (յուրաքանչյուր փոփոխության դեպքում) թիվ 35 հաշվետվության մեջ անհրաժեշտ է ներառել նաև էական նախադեպերը ՇՄԱՍՌ-ի գծով:

Վերը ներկայացված թիվ 34 և 35 հաշվետվությունների մեջ ՇՄԱՍՌԿՀ-ն չներառելու դեպքում ՀՀ կենտրոնական բանկը կարող է սահմանել եռամսյակային պարբերականությամբ ՀՀ ԿԲ ներկայացվող նոր՝ հատուկ հաշվետվական ձև, որում կներառվեն, օրինակ, էական դեպքերն ու նախադեպերը, բանկերի վճարած տույժերն ու տուգանքները, եթե կան:

Ֆինանսական ակտիվների դասակարգման մեջ արտոնություններ պետք է սահմանվեն կանաչ վարկերի համար, մասնավորապես՝ դրանց նկատմամբ ավելի պակաս պահուստավորման ֆոնդերի ձևավորմամբ:

Վարկային ռիսկի հաշվարկում օգտագործվող ռիսկի կշիռների աղյուսակում կանաչ ակտիվները պետք է կշռել 0% ռիսկի կշռով:

Կանաչ պարտատոմսերով ներգրավված միջոցների վրա չպետք է տարածվի ոչ արտարժույթային, ոչ էլ դրամային միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման հիմնական տնտեսական նորմատիվը:

ՀՀ կենտրոնական բանկը պետք է մշակի և պարբերաբար թարմացնի ու իր պաշտոնական կայքում հրապարակի «Բացառումների ցանկը» (Negative list)՝ բիզնես ծրագրեր, ոլորտներ և գործունեության տեսակներ, որոնք չպետք է վարկավորվեն ՀՀ առևտրային բանկերի կողմից:

Բանկերի գործունեության CAMELS ամփոփ գնահատականը հաշվարկելիս Ա՝ «Ակտիվների որակ» տարրի գնահատման ժամանակ հաշվի առնել կանաչ ակտիվների տեսակարար կշիռը նույնպես: Տ՝ «Շուկայական փոփոխությունների զգայունության» գնահատման ժամանակ հարկ է հաշվի առնել նաև ՇՄԱՍՌԿՀ-ն: Համապատասխան գործակիցներ կարելի է ներառել Բանկերի համեմատական վերլուծության (UBPR) ժամանակ: Արդյունքում՝ ՀՀ կենտրոնական բանկը կունենա ՀՀ տարածքում գործող բանկերի վարկանիշները՝ ըստ ՇՄԱՍՌԿՀ-ի:

Բանկերն իրենց կայքում «Ֆինանսական կազմակերպությունների և ֆինանսական խմբերի կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգի համաձայն՝ պետք է տեղադրեն ՇՄԱՍՌԿՀ-ի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն, ինչպես նաև բանկի՝ Պատասխանատու ֆինանսավորման հաշվետվությունը:

Անկասկած, ՇՄԱՍՌԿՀ շարունակական կատարելագործման տեսանկյունից առանձնահատուկ դերակատարություն ունեն առևտրային բանկի ներքին

<sup>13</sup> Տե՛ս [https://www.bankingsupervision.europa.eu/press/conferences/shared/pdf/20230502\\_research\\_conference/Nguyen\\_paper.pdf](https://www.bankingsupervision.europa.eu/press/conferences/shared/pdf/20230502_research_conference/Nguyen_paper.pdf)



հսկողության համակարգը, հսկողական գործառույթները և հատկապես հետադարձ կապի ապահովումը: Անհրաժեշտ է «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4-ում ներառել բոլոր անհրաժեշտ պահանջները բանկերում ՇՄԱՍՌԿՀ ներդրման համար:

Մյուս կողմից՝ ներկայումս ՀՀ կենտրոնական բանկը լիարժեք և ամբողջական անցում է կատարում ռիսկերի վրա հիմնված վերահսկողության (Risks based supervision), որի տրամաբանության շրջանակներում հրամայական պահանջ է դարձել առևտրային բանկերի վերահսկողության ժամանակ յուրաքանչյուր բանկի ՇՄԱՍՌԿՀ-ին գնահատական տալը:

Այս տեսանկյունից կարևորություն է ստանում ներքին աուդիտի ստորաբաժանման մեջ էկոաուդիտորի հաստիքի պարտադիր առկայությունը՝ ճիշտ նույն տրամաբանությամբ և հիմնավորմամբ, ինչպես ՏՏ աուդիտորի հաստիքի դեպքում է: Նման պարագայում ենթադրվում է, որ բանկի կառավարման համապատասխան մարմնի կողմից հաստատվող ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքային պլանում կներառվեն էկոաուդիտի աշխատանքներ նույնպես:

Առևտրային բանկերի նկատմամբ հսկողություն իրականացնող մասնագիտացված ինստիտուտների շարքում ՀՀ կենտրոնական բանկի, առևտրային բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման հետ հավասարապես կարևոր են արտաքին աուդիտ իրականացնող կազմակերպության դերն ու նշանակությունը: Ըստ էության, արտաքին աուդիտի գործառույթներում պետք է ներառվի նաև ՇՄԱՍՌԿՀ գնահատումը: Առանձին դեպքերում ՀՀ կենտրոնական բանկը կարող է առևտրային բանկին մասնագիտացված արտաքին էկոաուդիտ անցնելու պահանջ ներկայացնել:

Բանկի ՇՄԱՍՌԿՀ կայացման և արդյունավետ գործունեության համար կարևոր է առևտրային բանկերում բողոքարկման գործընթացների կազմակերպման մշակույթի արմատավորումը: Այս մշակույթի ձևավորման համար առանցքային է քաղաքակիրթ հասարակության (Civil society) և դրա բաղադրիչների (տարբեր շարժումների և հասարակական կազմակերպությունների) գործունեությունը: Հետևաբար՝ ՀՀ կենտրոնական բանկը պետք է համագործակցության ուղիներ հաստատի հատկապես բիոակտիվիստների, էկոլոգիական տարբեր շարժումների և հասարակական կազմակերպությունների հետ:

Առևտրային բանկերում ՇՄԱՍՌԿՀ արմատավորումը պետք է ընթանա հնարավորինս հրապարակային և թափանցիկ: Հետևաբար՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն, բանկերից պետք է պահանջել «Տեղեկությունների հրապարակում» բաժնում պարտադիր հրապարակել բանկի տարեկան կամ կիսամյակային սոցիալական հաշվետվությունը՝ պատասխանատու ֆինանսավորման առումով, ինչպես նաև ներկայացնել բանկի ՇՄԱՍՌԿՀ-ն: Բանկի պաշտոնական կայքի «Մատուցվող ծառայություններ» բաժնում հարկ է առանձնացնել կանաչ պրոդուկտները՝ օրինակ՝ կանաչ վարկեր, Green leasing կամ կանաչ պարտատոմսեր և այլն:

Վերը ներկայացված ճանապարհային քարտեզը կարող է լրացվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերում ՇՄԱՍՌԿՀ գնահատման նպատակային թեմատիկ ուսումնասիրություն անցկացնելուց և արդյունքների ամփոփումից հետո:

**ՀՀ առևտրային բանկեր:** ՀՀ առևտրային բանկերը նախ պետք է մշակեն ՇՄԱՍՈՒԿՀ-ի մասին քաղաքականություն, որը պետք է հաստատվի կառավարման համապատասխան մարմնի կողմից: Քաղաքականության մեջ պարտադիր անհրաժեշտ է նշել «Բանկի առաքելությունը և պատասխանատվությունը»: Կարևոր է «Բացառման ցանկի» հստակեցումը՝ բանկի կողմից չֆինանսավորվող վարկերի ցանկի կազմում: Բացի «Բացառման ցանկից», պետք է ունենալ համապատասխան «Ուղղորդիչ ցանկ», որը որոշակի մեթոդական ցուցումներ և ուղղություններ կտա վարկավորման ժամանակ:

Բանկի կառավարման և կազմակերպական կառուցվածքի տեսանկյունից էական է հստակեցնել՝ նեղ մասնագիտությամբ էկզլոգը բանկի կառուցվածքային ո՞ր ստորաբաժանումում պետք է լինի՝ Վարկային գործառնությունների, Իրավաբանական, Ռիսկերի կառավարման և համապատասխանության, Մշտադիտարկման, թե առանձին ստորաբաժանումում՝ Գործադիր տնօրենի ուղղակի ենթակայության տակ: Նման հաստիքի առկայությունը պետք է պարտադիր լինի բանկի գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող Ներքին աուդիտի ստորաբաժանումում: Այս հարցն անհրաժեշտաբար պետք է լուծվի յուրաքանչյուր առևտրային բանկի կողմից՝ հիմքում ունենալով տվյալ բանկի գործունեության բիզնես մոդելի առանձնահատկությունները:

Առևտրային բանկի ՇՄԱՍՈՒԿՀ-ն գերազանցապես կապվում է բանկային գործունեության հիմնական ֆինանսական գործառնության՝ վարկավորման գործընթացների հետ: Վարկառուների վարկունակության և վճարունակության գնահատման ամփոփաթերթերում կամ, օրինակ, scoring-ի համակարգում անհրաժեշտ է պարտադիր տարր դարձնել ՇՄԱՍՈՒ-երի գնահատումը, որը կվերաբերի ինչպես վարկառուի գործունեության ոլորտին, այնպես էլ առաջարկվող բիզնես ծրագրին և այլն: Գործնականում որոշ դեպքերում կպահանջվի նաև գնահատել վարկառուի մատակարարների և գնորդների ՇՄԱՍՈՒ-երը: Վարկերից բացի, գրավները նույնպես պետք է գնահատել ՇՄԱՍՈՒ-երի տեսանկյունից:

Բանկի ՇՄԱՍՈՒԿՀ արդյունավետ գործունեության համար կարևոր է վարկավորման բիզնես գործընթացների՝ որոշումների կայացման ծառի կամ ալգորիթմի մշակումը, այսինքն՝ վարկավորման հայտն ընդունող մասնագետը, վարկային խորհրդատուն կամ վերլուծաբանը, ինչպես նաև ՇՄԱՍՈՒ գնահատող մասնագետը, ռիսկերի կառավարման կամ համապատասխանության գործառնության համար պատասխանատու անձը վարկային կոմիտեի որոշում կայացնելու համար պետք է նկարագրեն բիզնես գործընթացները՝ կատարողներ, տեղեկատվության փոխանցում, պատասխանատուներ և այլն:

Վարկառուի հետ կնքվող վարկային պայմանագրերի «Կողմերի պատասխանատվությունը» բաժնում պետք է նախատեսել տոկոսադրույքի բարձրացում, վարկի հետկանչ, տուգանք, եթե հետագայում իրականացվող մշտադիտարկումների ժամանակ բացահայտվում է ՇՄԱՍՈՒ-երի աճ վարկի օգտագործման ընթացքում:

Վարկի տրամադրումից հետո նույնպես պարբերաբար պետք է իրականացնել վարկառուի ՇՄԱՍՈՒ-երի մշտադիտարկում: Բանկի կողմից իրականացված մշտադիտարկման հաշվետվության մեջ՝ առանձին բաժնում, հարկ է նշագրում կատարել վարկառուի ՇՄԱՍՈՒ-երի մակարդակի մասին:

**Եզրակացություններ:** Կանաչ բանկերի մոտիվացման նպատակով ՀՀ կենտրոնական բանկը պետք է առանձնացնի իր և առևտրային բանկի պատասխանատվության տակ գտնվող գործառույթները: Այս առումով, ՀՀ կենտրոնական բանկը պետք է կանաչ բանկերի միասնական մոտեցումներ և սկզբունքներ կիրառի բոլոր առևտրային բանկերի նկատմամբ հավասարապես:

ՀՀ կենտրոնական բանկը պետք է իրականացնի փոխշաղկապված գործողություններ: Այսպես՝ անհրաժեշտ է.

Ֆինանսական ակտիվների դասակարգման կարգում արտոնություններ սահմանել կանաչ վարկերի համար, մասնավորապես՝ դրանց նկատմամբ ավելի պակաս պահուստավորման ֆոնդերի ձևավորմամբ:

Ռիսկով կշռված ակտիվների աղյուսակում կանաչ վարկերը կշռել ավելի ցածր ռիսկի դասով:

Կանաչ պարտատոմսերով ներգրավված միջոցներն ազատել պարտադիր պահուստավորումից:

Պարտադրել բանկերին ունենալ ՀՀ կենտրոնական բանկի կողմից կազմված «Բացառման ցուցակ»՝ ոլորտներ և գործունեության տեսակներ, որոնք չպետք է վարկավորվեն: Այդ բացառման նվազագույն ցուցակը պետք է թափանցիկ լինի և տեղադրվի ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքում:

CAMELS-ի ամփոփ ցուցանիշի հաշվարկման ժամանակ A՝ «Ակտիվների որակ» տարրի գնահատման դեպքում հաշվի առնել կանաչ ակտիվների տեսակարար կշիռը նույնպես:

Սահմանել հատուկ հաշվետվության ձև, որը կներառվի Կանոնակարգ 3-ում՝ սահմանելով որոշակի ցուցանիշներ բանկի կանաչ ակտիվների քանակն ու որակը գնահատելու համար: Հաշվետվության մեջ ներառել նաև այլ ցուցանիշներ, օրինակ՝ ՇՄԱՍՌԿՀ էական դեպքերն ու նախադեպերը, բանկերի կողմից վճարված տույժերն ու տուգանքները՝ խախտումներ արձանագրելու դեպքում: Վարկանշավորել բանկերն ըստ ՇՄԱՍՌ դասերի:

Սթրես թեստերի հաշվետվության մեջ պարտադիր ներառել նաև ՇՄԱՍՌ սթրես թեստը:

Պարտադրել բանկերին իրենց պաշտոնական կայքում «Տեղեկությունների հրապարակումը» բաժնում տեղադրել ՇՄԱՍՌԿՀ-ն, ինչպես նաև Պատասխանատու ֆինանսավորման հաշվետվությունը:

Բանկերի ներքին և արտաքին աուդիտի կազմում պարտադիր ներառել էկոաուդիտորի առանձին հաստիքի պահանջ:

Բանկի ՇՄԱՍՌԿՀ-ն ներառել Կանոնակարգ 4-ում՝ որպես նվազագույն ներքին հսկողության պահանջ:

Վարկային պայմանագրերում անհրաժեշտ է նախատեսել հատուկ դրույթներ, համաձայն որոնց՝ եթե վարկառուն խախտել է ՇՄԱՍՌԿՀ պայմանները, ապա բանկը կարող է բարձրացնել վարկի տոկոսադրույքը կամ սահմանել տուգանք կամ տույժ:

Բանկի կողմից իրականացվող մշտադիտարկումների հաշվետվության մեջ ներառել առանձին բաժին՝ վարկառուի ՇՄԱՍՌԿՀ գնահատական:

ՇՄԱՍՌԿՀ-ն հարկ է դարձնել առևտրային բանկի ռիսկ-մենեջմենթի և համապատասխանության գործընթացների պարտադիր բաղադրիչ:

Բանկի կողմից վարկառուի վարկունակության որոշման համակարգում (scoring) առանձին բաժնով անհրաժեշտ է ներկայացնել վարկառուի, քիզնես ծրագրի, գործունեության ոլորտի ռիսկի գնահատականը:

### Օգտագործված գրականություն

1. ՀՀ կենտրոնական բանկի կայուն (հարատև) ֆինանսների ազգային ճանապարհային քարտեզ, ՀՀ կենտրոնական բանկ, հոկտեմբեր, 2023, [https://www.cba.am/am/news/pages/news\\_06-10-2023.aspx#sthash.9vtFzVe8.dpbs](https://www.cba.am/am/news/pages/news_06-10-2023.aspx#sthash.9vtFzVe8.dpbs)
2. Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկի կառավարման համակարգի ձեռնարկ, Ասիական զարգացման բանկ, 2014, <chrome-extension://efaidnbmnnnibpcajpcgiclfefindmkaj/http://env.am/storage/files/kaps-porc-naxagic.pdf>
3. 2022 climate risk stress test, July 2022, European Central Bank, Banking supervision, [chrome-extension://efaidnbmnnnibpcajpcgiclfefindmkaj/https://www.bankingsupervision.europa.eu/ecb/pub/pdf/ssm.climate\\_stress\\_test\\_report.20220708-2e3cc0999f.en.pdf](chrome-extension://efaidnbmnnnibpcajpcgiclfefindmkaj/https://www.bankingsupervision.europa.eu/ecb/pub/pdf/ssm.climate_stress_test_report.20220708-2e3cc0999f.en.pdf)
4. Arun T., Girardone C., Piserà S. (2022). 17. ESG issues in emerging markets and the role of banks. *Handbook of Banking and Finance in Emerging Markets*, 321, [https://www.researchgate.net/publication/354203868\\_ESG\\_issues\\_in\\_emerging\\_markets\\_and\\_the\\_role\\_of\\_banks](https://www.researchgate.net/publication/354203868_ESG_issues_in_emerging_markets_and_the_role_of_banks)
5. Cerrone R. (2022). Banking Regulation for ESG Principles and Climate Risk, <https://www.intechopen.com/chapters/81180>
6. Environmental and Social Management System Implementation Handbook GENERAL, IFC, WB.
7. Environmental and Social Policy, European Bank for Reconstruction and Development, April 2019.
8. ENVIRONMENTAL ASSESSMENT GUIDELINES, ADB, 2003.
9. Environmental, Health, and Safety General Guidelines, IFC, WB.
10. EXTENDING OUR HORIZONS, Assessing credit risk and opportunity in a changing climate: Outputs of a working group of 16 banks piloting the TCFD Recommendations PART 1: Transition-related risks & opportunities, UNEP Finance Initiative - Oliver Wyman, April 2018, <chrome-extension://efaidnbmnnnibpcajpcgiclfefindmkaj/https://www.unepfi.org/wordpress/wp-content/uploads/2018/04/EXTENDING-OUR-HORIZONS.pdf>
11. Frequently asked questions on climaterelated financial risks, Basel Committee on Banking Supervision, 8 December 2022.
12. Good practices for climate related and environmental risk management Observations from the 2022 thematic review November 2022 European Central Bank, Banking supervision, <chrome-extension://efaidnbmnnnibpcajpcgiclfefindmkaj/https://www.bankingsupervision.europa.eu/ecb/pub/pdf/ssm.thematicreviewcercompendiumgoodpractices112022-b474fb8ed0.en.pdf>
13. Guidance Note 1 Assessment and Management of Environmental and Social Risks and Impacts, IFC, WB, Published January 1, 2012 (updated June 14, 2021).

14. Guide on climate-related and environmental risks Supervisory expectations relating to risk management and disclosure, November 2020, European Central Bank, Banking supervision, chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/  
<https://www.bankingsupervision.europa.eu/ecb/pub/pdf/ssm.202011finalguideonclimate-relatedandenvironmentalrisks~58213f6564.en.pdf>
15. Miralles-Quirós M. M., Miralles-Quirós J. L., Redondo Hernández J. (2019). ESG performance and shareholder value creation in the banking industry: International differences. *Sustainability*, 11(5), 1404.
16. Principles for the effective management and supervision of climate-related financial risks, Basel Committee on Banking Supervision, June 2022.
17. Sustainability Guideline Assessment and management of Environmental, Social, and Climate Aspects: Principles and Procedures 28 February 2022 Author: KfW Development Bank, chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/  
[https://www.kfw-entwicklungsbank.de/PDF/Download-Center/PDF-Dokumente-Richtlinien/Nachhaltigkeitsrichtlinie\\_EN.pdf](https://www.kfw-entwicklungsbank.de/PDF/Download-Center/PDF-Dokumente-Richtlinien/Nachhaltigkeitsrichtlinie_EN.pdf)
18. Environmental and Social Framework, WB, EBRD, IDA. The WORLD BANK, 2020, chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/  
<https://documents1.worldbank.org/curated/zh/925831571371630697/pdf/Environmental-and-Social-Management-Framework.pdf>
19. UNEP Environmental and social sustainability framework (ESSF), 25 february 2020, chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/  
<https://wedocs.unep.org/bitstream/handle/20.500.11822/32022/ESSFEN.pdf?sequence=1&isAllowed=y>

**НОРАЙР САФАРЯН**

Доцент кафедры банковского дела и страхования АГЭУ,  
кандидат экономических наук

**АРЕВИК ОГАННИСЯН**

Доцент кафедры менеджмента АГЭУ,  
кандидат экономических наук

**Проблемы становления зеленых банков в РА<sup>14</sup>.** – В статье были изучены возможности становления Зеленых банков в РА. В частности, была проанализирована система управления экологическими и социальными рисками (СУЭСР) коммерческих банков РА, её ключевые компоненты, инструменты и возможности совершенствования. В то же время были рассмотрены направляющие действия и шаги Центрального банка РА, как мегарегулятора и учреждения имеющего исключительное право банковского надзора, которые должны быть направлены на мотивацию зеленого финансирования коммерческими банками РА.

В результате исследования были представлены конкретные рекомендации и требования по формированию зеленых финансовых активов коммерческими банками РА: оценка кредитоспособности заемщика, предлагаемый бизнес-план, оценка СУЭСР сферы деятельности, кредитный договор, "Отрицательный список", визиты на место деятельности заемщика, составление отчета мониторинга, организация апелляционных процессов и в других областях.

В отношении Центрального банка РА представлены рекомендации: разработка новой формы отчетности с квартальной периодичностью, включение оценки и прогнозов СУЭСР в рейтинговую систему CAMELS коммерческих банков, взвешивание зеленых активов с более низким весом риска в сумме кредитного риска, рыночного риска и операционного риска (ABP), расчет СУЭСР коммерческими банками в стресс-тестах, освобождение от основного экономического норматива обязательного резервирования по средствам, привлеченными в результате эмиссии зеленых облигаций, применение льготных процентных ставок при классификации зеленых финансовых активов и при формировании резервов на возможные потери и др.

**Ключевые слова:** ответственное финансирование, зеленый банк, зеленые активы, инструменты зеленого финансирования Центрального банка РА и коммерческих банков

JEL: G21, E58

DOI: 10.52174/29538114\_2023.2-42

<sup>14</sup> Большинство рекомендаций статьи в равной степени применимы и к другим финансово-банковским организациям.

**NORAYR SAFARYAN**

*Associate Professor at the Chair of Banking and Insurance  
at ASUE, PhD in Economics*

**AREVIK HOVHANNISYAN**

*Associate Professor at the Chair of Management  
at ASUE, PhD in Economics*

***The Problems in Establishing Green Banks in the RA<sup>15</sup>***

Our research delved into the possibility of establishing Green Banks in the RA. In particular, the environmental and social risk management system (ESMS) of commercial banks of the RA, its key components, tools, and improvement opportunities were analyzed. At the same time, the guiding action and steps of the Central Bank of the RA, as a mega-regulator and an institution with exclusive competence of Banking Supervision, were considered, which should be aimed at motivating green financing by commercial banks of the RA.

As a result of the research, specific recommendations and requirements for the formation of financial assets by the commercial banks of the RA were presented: evaluation of the creditworthiness of the borrower, proposed business plan, assessment of the ESMS of the field of activity, credit agreement, a Negative list, conducting on-site visits to the borrower's place of operation, monitoring report in drafting, organization of appeal processes and addressing other fields.

Regarding the Central Bank of the RA, recommendations have been presented: development of a new reporting form on quarterly basis, inclusion of the assessment and forecasts of the ESMS in the CAMELS rating system of commercial banks, weighting of green assets with a possible low-class risk in the sum of credit risk, market and operational risk (RWA), commercial banks' inclusion of risk calculation of ESMS in stress tests, exemption from the basic economic normative of compulsory reserve for the funds raised as a result of green bonds issue, application of preferential interest rates in the order of financial asset classification and potential loss reserves for green financial assets provided.

**Keyword:** *responsible financing, green bank, green assets, green financing tools of the Central bank of the RA and commercial banks*

JEL: G21, E58

DOI: 10.52174/29538114\_2023.2-42

<sup>15</sup> Most of the recommendations in the article are equally applicable to the financial and banking organizations as well.